



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱԱՀ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ 2015

ՀԱԱՀ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐՈՒՄ

Համալսարանի ղեկավարությունը կարևորում է բոլոր շահակից կողմերի ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներում: Դրա համար մշակվել և գիտական խորհրդի կողմից հաստատվել է «Որակի ապահովման համակարգում ներգրավված համալսարանական հիմնական ստորաբաժանումներն ու կառույցները և նրանց միջև պարտականությունների բաշխման կարգը»:

Համալսարանի բոլոր շահակից կողմերը ներգրավված են որակի ապահովման գործընթացներում, մասնավորապես՝

- ❖ Որպես պաշտոնական մասնակիցներ համալսարանի կառավարման խորհուրդներում (ձայնի իրավունքով):
- ❖ Որպես պաշտոնական մասնակիցներ համալսարանի ինքնագնահատման և այլ գնահատման գործընթացներում:
- ❖ Անկետավորման գործընթացին՝ կանոնավոր հիմունքներով:

Գործընթաց / Մասնակիցներ	Վարչական կազմ	Պրոֆեսորադոսսալ խումբի կազմ	Ղեկավար կազմ	Ուսանողներ	Շրջանավարտների	Գործատուներ	Պետական մարմիններ
Ներգրավվածությունը համալսարանի հոգաբարձուների խորհրդում	✓	✓	✓	✓	✓	✓	✓
Ներգրավվածությունը համալսարանի գիտական խորհրդում	✓	✓	✓	✓			
Ներգրավվածությունը ինստիտուցիոնալ ինքնավերլուծության գործընթացում և այլ գնահատման գործընթացներում	✓	✓	✓	✓			✓
Ներգրավվածությունը Մասնագիտությունների կրթական ծրագրերի մշակման փուլում		✓		✓		✓	
Ներգրավվածությունը անկետավորման գործընթացում							
Ներգրավվածությունը ներքին աուդիտներին							
Ներգրավվածությունը արտաքին աուդիտներին							

<p>Համալսարանի ղեկավար կազմ</p>	<p>Համալսարանի ղեկավար կազմը կառավարում է որակի համակարգը, կայացնում որոշումներ՝ ուղղված որակի մշակույթի զարգացմանը, որակի ապահովման գործընթացների բարելավմանը, ներքին աուդիտների արդյունքների քննարկմանը և ուղղիչ գործողությունների կազմակերպմանը:</p> <p>Համալսարանի ղեկավար կազմը տարեկան գնահատում է համալսարանի գործունեությունը և դրա հիման վրա կազմում տարեկան գործունեության հաշվետվություն:</p>
<p>Վարչական կազմ</p>	<p>Ֆակուլտետները ուսումնական տարվա ընթացքում կազմակերպում են քննարկումներ, ուղղված ծառայությունների որակի ապահովմանը, տարեկան գնահատում են կառույցների գործունեությունը և ներկայացնում հաշվետվության տեսքով:</p>
<p>Ուսանողներ և դասախոսական կազմ</p>	<p>Համալսարանի դասախոսական կազմը ներգրավված է՝</p> <ul style="list-style-type: none"> ▪ համալսարանի գիտական խորհրդում, ▪ գիտական խորհրդին կից որակի վերահսկման հանձնախմբում, ▪ անկետավորման գործընթացում: <p>Պրոֆեսորադասախոսական կազմը հասարակական կարգով մասնակցում է համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների ներքին աուդիտների անցկացմանը: Նրանց կողմից վեր են հանվում ստորաբաժիններում բացահայտված թերությունները և բացթողումները, կատարում գրառումներ, կատարում վերլուծություն և կազմում հաշվետվություն, որը դրվում է քննարկման համալսարանի գիտական խորհրդում: Դրա հիման վրա կայացվում են որոշումներ ուղղված ստորաբաժանումների գործունեության բարելավմանը և ուղղիչ գործողությունների իրականացմանը:</p> <p>Գիտական խորհրդում վեր են հանվում որակին առնչվող հարցեր, կայացվում որոշումներ:</p> <p>Պրոֆեսորադասախոսական կազմը պարբերաբար մասնակցում է համալսարանի գիտակրթական գործունեության գնահատման և իրենց կարիքների վերհանման գործընթացին:</p> <p>Համալսարանի ուսանողները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում, մասնավորապես՝</p> <ul style="list-style-type: none"> ▪ Համալսարանի հոգաբարձուների խորհրդում (ձայնի իրավունքով): ▪ Համալսարանի գիտական խորհրդի կազմում: ▪ Մասնակցում են որակի ապահովման գործընթացներում՝ որպես ինքնակառավարման մարմիններ (ուսանողական

	<p>խորհուրդ, ուսանողական գիտական ընկերություն):</p> <ul style="list-style-type: none"> ▪ համալսարանի մասնագիտական կրթական ծրագրերի վերանայման և վերամշակման գործընթացում: ▪ Պրոֆեսորադասախոսական կազմի գնահատման գործընթացում: ▪ Համալսարանի ռեսուրսային բազայի, ծառայությունների գնահատման գործընթացում՝ անկետավորման միջոցով: <p>Ֆակուլտետներում ձևավորվել են Մասնագիտությունների կրթական ծրագրերի վերանայման և մշակման հանձնախմբեր, որում ընդգրկված են մասնագիտական ամբիոնների դասախոսները և ուսումնառողները:</p> <p>Tempus-ի GOVERN ծրագրի շրջանակներում իրականացվել են մի քանի կրթական ծրագրերի վերամշակման գործընթացներ՝ նոր պահանջներին համապատասխան, որտեղ մասնակցել են ներքին շահակիցները (ուսումնառողներ, պրոֆեսորադասախոսական կազմ), աշխատաշուկայի ներկայացուցիչներ:</p> <p>ՄԿԾ-երի վերանայման և վերամշակման գործընթացում ուսանողների ներգրավումը Համալսարանում նոր սկսվող գործընթաց է, որը անհրաժեշտ է որ ունենա շարունակական բնույթ:</p>
--	--

<p>Արտաքին շահակիցներ</p>	<p>Արտաքին շահակիցները (գործատուները, աշխատաշուկայի ներկայացուցիչներ, պետական համակարգի ներկայացուցիչներ, շրջանավարտներ) ներգրավված են որպես պաշտոնական մասնակիցներ կառավարման խորհրդում (ձայնի իրավունքով):</p> <p><i>Աշխատաշուկայի ներկայացուցիչները, գործատուները, պետական համակարգի ներկայացուցիչները</i> ներգրավված են շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման և ավարտական աշխատանքների պաշտպանության անցկացման և գնահատման գործընթացում: Տվյալ գործընթացը համալսարանում կրում է շարունակական բնույթ: Ուսանողների վերջնական ատեստավորման արդյունքում ատեստավորման հանձնաժողովի ղեկավարը (արտաքին շահակից) ներկայացնում է հաշվետվություն, որում նաև նշում են առաջարկություններ՝ ուղղված կրթական գործունեության բարելավմանը: Հաշվետվությունները ներկայացվում են համալսարանին:</p>
----------------------------------	--

րանի գիտական խորհրդի նիստին, որտեղ կայացվում են որոշումներ՝ ուղղված բարելավման պլանների մշակմանը և իրականացմանը:

Աշխատաշուկայի ներկայացուցիչները ներգրավված են ՄԿԾ-երի վերանայման և վերամշակման գործընթացում, և համարվում են դրա մասնակից անդամ: Տվյալ գործընթացը նոր սկսվող գործընթաց է, որը պահանջում է շարունակականություն:

ՀԱԱՀ արտաքին շահակիցների հետ, մասնավորապես գործատուների հետ պարբերաբար կազմակերպվում են հանդիպումներ՝ ուղղված որակին առնչվող տարբեր հարցերի շուրջ քննարկմանը:

Շահակիցների կարիքների բացահայտում: Հարցումների իրականացում:	
<p>Համալսարանում իրականացվում են հարցումներ ուղղված գիտակրթական միջավայրի (ռեսուրսների և ծառայությունների) գնահատմանը և ներքին շահակիցների (ուսանողներ և դասախոսական կազմ) կարիքների բացահայտմանը տվյալ ուղղությամբ:</p>	
<p>Ուսանողներ</p>	<ul style="list-style-type: none"> ❖ Ուսանողները ներգրավված են դասախոսների և դասավանդման որակի գնահատման գործընթացում, որն իրականացվում է յուրաքանչյուր տարի և ենթարկվում վերլուծության: ❖ Ուսանողները ներգրավված են համալսարանի ինքնագնահատման և ինքնավերլուծության գործընթացում՝ <ul style="list-style-type: none"> ▪ որպես հարցումների անմիջապես մասնակից, ▪ որպես հարցման անցկացնող, ▪ որպես անկետաների տվյալները կոդավորող, ▪ որպես ինքնագնահատման համար անհրաժեշտ տվյալները հավաքագրող: ❖ Ուսանողները ներգրավված են՝ <ul style="list-style-type: none"> ▪ համալսարանի ռեսուրսային բազայի գնահատման գործընթացում, ▪ համալսարանի ծառայությունների գնահատման գործընթացում, ▪ վարչական կազմի գործունեության գնահատման գործընթացում, ▪ գիտահետազոտական աշխատանքներում մասնակցության գնահատում: <p>Ուսանողները կանոնավոր կերպով մասնակցում են դասախոսի և դասավանդման գործընթացի գնահատմանը՝ «Դասախոսը ուսանողի աչքերով»: Գնահատման արդյունքները վերլուծվում և օգտագործվում են պրոֆեսորադասախոսական կազմի ատեստավորման ժամանակ:</p> <p>Հարցումներին մասնակցել են 2-ից 5-րդ կուրսի և մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողները՝ շուրջ 890 ուսանող:</p>
<p>Պրոֆեսորադասախոսական կազմ</p>	<ul style="list-style-type: none"> ❖ Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը ներգրավված է իր լեզվական և համակարգչային գիտելիքների բացա-

	<p>հայտման և գնահատման գործընթացում:</p> <ul style="list-style-type: none"> ❖ Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը ներգրավված է՝ <ul style="list-style-type: none"> ▪ համալսարանի կրթական համակարգի գնահատման գործընթացում, ▪ համալսարանի գիտահետազոտական ոլորտի գնահատման գործընթացում: <p>Հարցումներին մասնակցել են շուրջ 611 դասախոս:</p>
<p>Արտաքին շահակիցներ</p>	<p>Արտաքին շահակիցները դեռևս ներգրավված չեն համալսարանի գործունեության անկետավորման գործընթացում:</p> <p>Արտաքին շահակիցների կարիքների և պահանջների բացահայտման համար մշակվել են հարցման թերթիկներ, սակայն դեռ կիրառության մեջ չեն մտել:</p>

SWOT մատրից	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ol style="list-style-type: none"> 1. Համալսարանի ներքին շահակիցները ներգրավված են համալսարանի գործունեության գնահատման գործընթացում՝ անկետավորման միջոցով: 2. Համալսարանի ղեկավար կազմը իրականացնում է որոշումների ընդունում՝ ուղղված համալսարանի որակի համակարգի զարգացմանը և բարելավմանը: 3. Համալսարանի վարչական և պրոֆեսորադասախոսական կազմը ներգրավված է որակի կառավարման համակարգում՝ որպես ներքին աուդիտորներ: 4. Արտաքին շահակիցները ներգրավված են համալսարանի որոշումների կայացման, ուսանողների ատեստավորման, հավատարմագրման գործընթացներում: 	<ol style="list-style-type: none"> 1. Համալսարանի արտաքին շահակիցները ներգրավված չեն համալսարանի գործունեության անկետավորման գործընթացին: 2. Համալսարանի բոլոր շահակիցների թույլ ներգրավվածություն ՄԿԾ-երի վերանայման, գնահատման գործընթացներում:
Հնարավորություններ	Թերություններ
<ol style="list-style-type: none"> 1. Համալսարանի որակի գնահատման մշակույթի զարգացման հնարավորություն: 	<ol style="list-style-type: none"> 1. Համալսարանի ռազմավարական գնահատման գործընթացի համար շահակիցների կարիքները և պահանջները բացահայտող տվյալների ոչ ամբողջական լինելը: